

SACRAMENTO LEGAL OFFICE

100 Howe Avenue, Suite 235 North, Sacramento, CA 95825-8202

Telephone: (916) 488-9950 Fax: (916) 488-9960

Toll Free/TTY/TDD: (800) 776-5746

Note: When this memorandum was originally published we were known as Protection & Advocacy, Inc. (PAI). In October 2008, we changed our name from PAI to Disability Rights California.

MEMORANDUM

ՈՒՄ: Շահագրգրող Կողմերին
ՈՒՄ ԿՈՂՄԻՑ: Protection & Advocacy, Inc
ՆԱՐՑ: Բողոքագիր ներկայացնել պետության դեմ California Tort Act օրինագծի հիման վրա: (Filing Claims Against the Government Under the California Tort Claims Act)

ԹՎԱԿԱՆ: Օգոստոս 23, 2001

1. Ներածություն

Կալիֆորնիայում, նյութական վնասների հատուցում ստանալու համար, նախքան դատի տալը որեւէ հասարակական մարմնի (պետական, շրջանային կամ տեղական պետական մարմնի) կամ պետական աշխատողի, անհրաժեշտ է բողոքագիր ներկայացնել որ ամբողջացնում է California Tort Claims Act օրինագծի California Government (Gov't) Code-ի 810-996.6 հատվածների պահանջները: Նազվադեպ պարագաներում, դատ կարելի չէ բացել որեւէ պետական մարմնի դեմ նյութական վնասների հատուցում ստանալու համար, եթե պատշաճ, գրավոր բողոքագիր չներկայացվի 6 ամսվա ընթացքում: Նետեաբար, եթե դուք նույնիսկ վնասված լինեք պետության կողմից եւ առայժմ չցանկանաք դատական գործ բացել, դուք դեռ պետք է բողոքագիր ներկայացնեք ձեր իրավունքները պաշտպանելու եւ ընտրությունների կատարելու ազատ իրավունք ունենալու մեջ:

California Tort Claims Act օրինագիծը միջոցներ է մշակել որին պետք է հետեւեք պետության դեմ բողոքագիր ներկայացնելու ժամանակ նյութական վնասների հատուցում ստանալու համար: Այս հուշաթուղթը բացատրում է Օրինագծի ամենանշանակալից մասերը: Այս հուշաթուղթը հիմնված է այն օրենքի վրա որը ուժի մեջ է այս հուշաթղթի գրի առնման

ժամանակ որը, անկասկած, ենթակա է փոփոխման: Նույնպես, ձեր ներկայացրած դատի բնույթը կ'որոշի գործընթացը եւ ժամանակացուցակը: **Մենք ձեզ հանձնարարում ենք խոսք համապատասխան փաստաբանի հետ որի մասնագիտությունը ընկնում է այս օրենքի ծիրի մեջ (օրինակ՝ անհատական վնասվածք կամ բժշկական մասնագիտության սխալ կիրառում) մասնահատուկ տեղեկություն ձեռք բերելու ձեր հնարավոր բողոքագրերի եւ դիմումի ժամանակացուցակների շուրջ:**

2. Երբ է անհրաժեշտ բողոքագիր ներկայացնել

Դուք կարող եք պետությանը դատի հանձնելու որոշում կայացնել զանազան պատճառներով: Պատճառներից մեկը կարող է լինել այն որ պետական որեւէ մարմին ոտնակոխել է ձեր իրավունքները, կամ այն պատասխանատու է մահվան, ֆիզիկական վնասվածքի կամ կալվածային վնասի: Եթե պետությունը ձեզ վնաս է պատճառել, ապա այս տիպի վնասը կոչվում է “tort”: “Tort claim” ներկայացնող անհատը, որը ընդհանրապես վնասված անհատն է լինում, կոչվում է “բողոքագրող (claimant)”: Գրեթե բոլոր դեպքերում, դուք, որպես բողոքագրող, պետք է դիմեք tort claim-ի եթե դուք փորձում եք դրամական կամ “վնասների” հատուցում ստանալ պետական մարմնի կողմից: Gov't Code-ի հատված ներ 905, 905.2:

3. Ով կարող է բողոքագիր ներկայացնել

Դուք ինքներդ ձեր կողմից կամ այլ վնասված անհատի կողմից կարող եք պետական մարմնի դեմ բողոքագիր ներկայացնել: Gov't Code-ի հատվածներ 910, 910.2: “Վնասվածք” նշանակում է ոչ միայն ֆիզիկական վնասվածք այլ նաեւ անձնական գույքերի (ունեցվածքներ) վնասվածք եւ պաշտպանված իրավունքների ոտնակոխում:

4. Ինչպես բողոքագիր ներկայացնել

Դուք կարող եք շրջանային կամ տեղական պետական մարմնի կամ **աշխատողի** դեմ բողոքագիր ներկայացնել ուղղակի մարմնի վարչական հանձնաժողովի կամ գրագրի մոտ: Դուք կարող եք անձամբ հանձնել բողոքագիրը կամ փոստով ուղարկել: Gov't Code-ի հատված 915(a):

Դուք կարող եք **նահանգի կամ նահանգային գործակալության կամ աշխատողի** դեմ բողոքագիր ներկայացնել Նահանգային Վարչական Յանձնաժողովի (SBC) մոտ, կամ բողոքագիրը տանելով որեւէ

տեղական SBC գրասենյակ կամ փոստով ուղարկելով գլխավոր գրասենյակ: Gov't Code-ի հատված 915(b): SBC-ի գլխավոր գրասենյակի հասցեն է.

State Board of Control
Government Claims Branch
P.O. Box 3035
Sacramento, CA 95812-3035
(916) 323-3564 (Հայն)
(916) 323-5768 (Ֆաքս)

Դուք կարող եք պահանջել բողոքագրի ձեռնարկները SBC-ի անվճար 1-800-955-0045 հեռախոսահամարով, կամ կարող եք ինտերնետի միջոցով ձեռք բերել SBC website-ից, www.boc.cahwnet.gov/GovClms.htm հասցեով:

Եթե դուք բողոքագիրը անձամբ ներկայացնեք, բողոքագրի թվականը կլինի հանձնման օրվա թվականը: Եթե դուք բողոքագիրը փոստով ուղարկեք, բողոքագրի թվականը կլինի փոստի առաքման թվականը եւ ոչ թե պետական մարմնի բողոքագիրը ստանալու թվականը :

Եթե դուք որոշեք բողոքագրի դիմումը փոստով ուղարկել, մենք ձեզ հանձնարարում ենք որ ուղարկեք **ապահովված՝ վերադարձի կտրոն պահանջելով**: Պետական որոշ մարմիններ ունեն իրենց բողոքագրի ձեռքը: Այս ձեռքը ստանալու համար դուք կարող եք կապվել նրանց հետ: Այնքան ժամանակ որ բողոքագրի մեջ հայտնել եք պահանջված տեղեկությունները (տեսնել ներքեում), պարտադիր չէ որ գործածեք պետական մարմնի հատուկ բողոքագրի ձեռք:

5. Բողոքագրի դիմումի պարունակությունը

Համաձայն Պետական Կոդի 910րդ հատվածի, պետական մարմնի դեմ ներկայացված բողոքագիրը պետք է պարունակի հետևյալները.

- A. Ձեր անունը (բողոքագրողի անունը) եւ նամակագրական հասցեն.
- B. Փոստարկղային հասցեն որտեղ կցանկանաք ազդագրերը ստանալ.
- C. Բողոքագիրը առաջացնող պատահարի թվականը, վայրը, եւ պարագաները (այսինքն, նկարագրեք թե ինչ է պատահել եւ թե ինչպես եք վնասվել).
- D. Վնասվածքի, վնասի կամ կորուստի մասին ընդհանուր տեղեկություն.

E. Եթե ձեզ հայտնի է, պետական աշխատող(ներ)ի անուն(ներ)ը որ(ոնք) պատճառել է(են) վնասվածքը.

F. Եթե գումարը \$10,000-ից փոքր է, նշեք պահանջվող գումարի դոլարային արժեքը (ներառելով հետագա վնասների գնահատականը) եւ գումարի հաշվարկման հիմքը. եւ,

G. Եթե գումարը \$10,000-ից բարձր է, բողոքագրի դիմումի վրա մասնավոր գումարային արժեք նշել ձեզանից չի պահանջվում: Այնուամենայնիվ, դուք պարտավոր եք նշել եթե խնդիրը “սահմանված քաղաքացիական խնդիր” է: Gov’t Code-ի հատված 910(f), եւ California Civil Code of Procedure-ի հատվածներ 85, 86:

Խնդրի “սահմանված քաղաքացիական խնդիր” դասվելը կախված է ձեր պահանջած դրամական վնասների հատուցման գումարից եւ պետական մարմնից այլ հատուցումներ պահանջելուց: Ընդհանրապես, մի խնդիր “սահմանված քաղաքացիական խնդիր” է դասվում եթե ձեր պահանջած գումարը **\$25,000-ից փոքր է** (բացառելով փաստաբանական սակագներն ու ծախսերը) եւ դուք **չեք պահանջում հետեւյալներից որեւէ մեկը.**

1. Վերջնական վճիռ (որը նշանակում է, դատարանային հրաման արձակված վերջնական լսումից հետո որ հրահանգում է կամ արգելում է կառավարական մարմնին ձեռնարկելու այն քայլին որի մասին բողոք էր ներկայացվել).
2. Կալվածային ունեցվածքի իրավագրի պահանջ,
3. Family Code-ի ծիրից ներս որեւէ հրամանի կիրառում, կամ
4. Օրինական հատուցում (պահանջել դատարանից հայտարարելու կողմերի իրավունքներն ու այլ օրինական կապերը հաստատող հարաբերությունները առանց օրենքի հարկադրում կամ կիրառում հրահանգելու), բացի այն ինչից որ թույլատրվում է Code of Civil Procedure-ի հատված 86-ում:

Code of Civil Procedure-ի հատված 580:

6. Ժամանակացուցակներ

California Tort Claims Act օրինագիծը առաջադրում է խիստ ժամանակացուցակներ որոնց դուք պետք է հետեւեք երբ պետական մարմնի դեմ բողոքագրի ձեւ եք լրացրել: Դուք պետք է դիմում ներկայացնեք **անհատական վնասվածքի** համար (ինչպես օրինակ, մահվան, ֆիզիկական վնասվածքի, կամ անձնական ունեցվածքի կորուստի դեպքերում) վնասվածքի պատահարից հետո **վեց ամսվա** ընթացքում: Gov’t Code-ի հատված 911.2:

Եթե վնասվածքը ստանալու ժամանակ չգիտեք թե ինչու պետք է բողոքագիր ներկայացնեք (ինչպես օրինակ, որոշ բժշկական մասնագիտության սխալ կիրառման դեպքերում), վեց ամսվա ժամանակահատվածը կսկսվի այն պահից երբ դուք գիտակցեք, կամ պետք է գիտակցած լինեիք պատճառը: Օրինակի համար, տեսեք, *Whitfield v. Roth* (1974) 10 C.3d 874, 112 Cal Rptr 540:

7. Ուշ ներկայացված բողոքագրեր

Երբեմն բողոքագրողը անհատական վնասվածքի բողոքագիր ներկայացնելու համար վեց ամսից ավելի է սպասում: Տվյալ դեպքում, օրենքը երկու տարբեր բողոքագրերի հետ տարբեր մոտեցում է ցուց տալիս. բողոքագրեր, որոնք պարզապես ուշ են հանձնվել եւ բողոքագրեր, որոնք ուշ են հանձնվել, բայց ընկերակցվել են “ուշ հանձնվող բողոքագրի դիմումի” հետ:

Եթե դուք բողոքագիր չեք ներկայացրել վնասվածքը ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում, դուք կարող եք կորցնել ձեր դատ բացելու իրավունքը բացի այն պարագայում երբ դուք գրավոր “դիմեք” պետական մարմնին որպեսզի ձեզ թույլատրեն ուշ դիմում ներկայացնելու: Gov’t Code-ի հատված 911.4(a): Չեր նամակում, դուք պետք է ասեք թե ինչ պատճառ (ներ)ով դուք ձեր դիմումը չեք ներկայացրել ձեր վնասվածքը ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում եւ պետք է ներփակեք իսկական բողոքագիրը: Gov’t Code-ի հատված 911.4(b). Ուշ բողոքագիր ներկայացնելու չորս արդարանալի պատճառներ կան.

1. Միալմունք, անզգուշություն, անակնկալ կամ ներելի անհոգություն,
2. Անչափահասություն (դիմում ներկայացնողը եղել է անչափահաս ամբողջ վեց ամսվա ընթացքում),
3. Ֆիզիկական կամ մտային անկարողություն, եւ
4. Դիմում ներկայացնողի մահանալը:

(Տես Gov’t Code-ի հատված 911.6(b))

Դուք պետք է գրավոր դիմեք հասարակական մարմնին պատշաճ ժամանակամիջոցում, վնասվածքը ստանալուց հետո մեկ տարին չանցած, ուշ դիմելու իրավունք ձեռք բերելու համար: Gov’t Code-ի հատված 911.4(b): Ուշ դիմելու “ընդունելի լինելը” որոշվում է համաձայն դեպքի, եւ որեւէ դեպքում նույնիսկ ամենակարճ ուշացումը կարող է անընդունելի համարվել: Ուրեմն, **դուք ուշ դիմելու իրավունք ձեռք բերելու համար պետք է դիմեք առանց հապաղելու:**

8. Ինչ է լինում ներկայացված բողոքագիրը

Բողոքագիրը ներկայացնելուց հետո, հանձնաժողովը¹ պետք է պատասխանի (թույլատրի կամ մերժի բողոքագիրը ամբողջությամբ կամ մասնակիորեն) 45 օրվա ընթացքում: Եթե հանձնաժողովը չպատասխանի, բողոքագիրը համարվում է մերժված 45րդ օրը: Gov't Code-ի հատվածներ 912.6(a), 912.4(c):

9. Պետական մարմնին դատի հանձնելը եթե բողոքագիրը մերժվել է

Հանձնաժողովը պետք է ձեռնարկի բողոքագրի վերաբերյալ իր կայացրած որոշման մասին (կամ ժամանակին չդիմելու պատճառով իր մերժման որոշումի մասին): Եթե հանձնաժողովը ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժի ձեր բողոքագիրը, ազդագիրը ձեզ ուղարկելուց հետո պետական մարմնի դեմ դատ բացելու **վեց ամիս** ժամանակ ունեք: Gov't Code-ի հատվածներ 913, 945.6(a)(1):

Եթե հանձնաժողովը թերանա ձեզ տեղեկացնել իր կայացրած (կամ չկայացրած) որոշումի մասին, ապա նման թերացումը կմեկնաբանվի որպես բողոքագրի մերժում (ինչպես ասվեց վերելում) եւ դուք տվյալ դեպքում վնասը ստանալու օրից սկսած կունենաք **երկու տարի ժամանակ** որպեսզի դատ բացեք: Gov't Code-ի հատված 945.6(a)(2):

Եթե դուք հնարավորություն չունեք դատական գործ բացել նշանակված ժամանակաշրջանում որովհետեւ դուք բանտում եք, դուք պետք է բացեք դատ ձեր (այսինքն արձակվելուց հետո): Gov't Code-ի հատված 945.6(b):

Կրկին անգամ, ինչպես բացատրվեց վերելում, այլ ժամանակացուցակներ եւ գործընթացային քայլեր կարող են կիրառվել ձեր դեպքին, ուրեմն մենք հանձնարարում ենք որ դուք խոսեք փաստաբանի հետ ձեր կացությանը պատշաճ, ավելի մասնահատուկ տեղեկություն ստանալու համար:

¹ Համաձայն Government Code հատված 900.2-ի “հանձնաժողով”-ի սահմանումն է.

(ա) տեղական հասարակական մարմնի պարագային, տեղական հասարակական մարմնի կառավարող Տարրը եւ

(բ) Նահանգի պարագայում, Նահանգային Վարչական Յանձնաժողովը